Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը հայտարարում է 2017/2018 ուսումնական տարվա հեռակա ուսուցման բակալավրիատի ընդունելություն՝ հետևյալ կրթական ծրագրերով.

Դասիչ	Մասնագիտություն	Քննություններ			Ընդամենը տեղեր	Ուսման վարձ /դրամ/
031101.00. 6	Տնտեսագիտություն	Մ(գ)	Հլ(գ)	Օտլ(գ)	100	450 000
041101.00.6	Հաշվապահական հաշվառում և հարկում (ըստ ոլորտի)	Մ(գ)	Հլ(գ)	Օտլ(գ)	100	450 000
041201.00.6	Ֆինանսներ (ըստ ոլորտի)	Մ(գ)	Հլ(գ)	Օտլ(գ)	100	450 000
041301.00.6	Կառավարում (ըստ ոլորտի)	Մ(գ)	Հլ(գ)	Օտլ(գ)	100	450 000
041401.00.6	Շուկայագիտություն /մարքեթինգ/ (ըստ ոլորտի)	Մ(գ)	Հլ(գ)	Օտլ(գ)	50	400 000
ԸՆԴԱՄԵՆԸ					**450**	

ՀՊՏՀ ԳՅՈՒՄՐՈՒ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

Դասիչ	Մասնագիտությունը	Քննություններ			Ընդամենը տեղեր	Ուսման վարձ /դրամ/
041101.00.6	Հաշվապահական հաշվառում և հարկում (ըստ ոլորտի)	Մ(գ)	Հլ(գ)	Օտլ(գ)	25	380 000
041201.00.6	Ֆինանսներ (ըստ ոլորտի)	Մ(գ)	Հլ(գ)	Օտլ(գ)	25	380 000
041301.00.6	Կառավարում (ըստ ոլորտի)	Մ(գ)	Հլ(գ)	Օտլ(գ)	20	380 000
ԸՆԴԱՄԵՆԸ					**70**	

ՀՊՏՀ ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

Դասիչը	Մասնագիտությունը	Քնություններ			Ընդամենը տեղեր	Ուսման վարձ /դրամ/
041201.00.6	Ֆինանսներ (ըստ ոլորտի)	Մ(գ)	Հլ(գ)	Օտլ(գ)	20	300 000
041301.00.6	Կառավարում (ըստ ոլորտի)	Մ(գ)	Հլ(գ)	Օտլ(գ)	20	300 000
ԸՆԴԱՄԵՆԸ					**40**	

Դիմորդների փաստաթղթերն ընդունվում են **2017թ. օգոստոսի 21-ից մինչև սեպտեմբերի 25-ը ներառյալ**:

Դիմումի հետ ներկայացվում են.

ա/ անձը հաստատող փաստաթուղթ (անձնագիր, զինվորական գրքույկ, ծննդյան վկայական, փախստականի վկայական, ՀՀ հատուկ անձնագիր, կացության վկայական) (բնօրինակ),

բ/ միջնակարգ կրթության վկայական (ատեստատ) կամ միջին մասնագիտական և նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության մասին փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակ),

գ/ 6 լուսանկար (3x4 սմ չափսի),

դ/ զինվորական գրքույկ կամ կցագրման վկայական,

ե/ ՀՀ օրենսդրությամբ սահմանված արտոնություններից օգտվող դիմորդները ներկայացնում են համապատասխան փաստաթղթեր (1-ին կամ 2-րդ խմբի և մինչև 18 տարեկան մանկուց հաշմանդամության, ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայող ծնողի զոհվելու, ժամկետային զինվորական ծառայության պարտականությունները կատարելիս հաշմանդամ դառնալու, առանց ծնողական խնամքի մնացած՝ մինչև 23 տարեկան երեխա լինելու մասին),

զ/ միջազգային և հանրապետական մրցույթների (օլիմպիադաներ, փառատոններ) դիպլոմներ,

է/ 2017, ինչպես նաև 2016 թվականի «Հայոց լեզու և գրականություն», «Օտար լեզու (անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, ռուսերեն)» և «Մաթեմատիկա»

առարկաների ավարտական միասնական քննությունների վկայագիր՝ դրանց առկայության դեպքում,

ը/ Փաստաթղթերի ձևակերպման վճարի (1500 դրամ) և բուհում հանձնվող քննությունների համար նախատեսված վճարի (յուրաքանչյուր քննության համար 1500-ական դրամ) անդորագիր (վճարումները կատարվում են տեղում):

Դիմորդները քննություն են հանձնում <<Մաթեմատիկա>>, <<Հայոց լեզու և հայ գրականություն>> և <<Օտար լեզու>> (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, ռուսերեն) առարկաներից: Եթե դիմորդը մասնակցել է 2016 կամ 2017 թվականների միասնական քննություններին և ստացել է դրական միավորներ (7.5 և բարձր միավոր), ապա մրցույթին կարող է մասնակցել այդ միավորներով: Դիմորդներն իրավունք ունեն պահպանելով միասնական քննությունների գնահատականները՝ հանձնել այդ առարկաների քննությունները և մրցույթին մասնակցել տվյալ առարկայի առավելագույն միավորով:

2016թ. և 2017թ. «Հայոց լեզու և գրականություն», «Օտար լեզու (անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, ռուսերեն») և «Մաթեմատիկա» առարկաներից միասնական քննություն չհանձնած կամ վերահանձնել ցանկացող դիմորդները քննություն են հանձնում Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում՝ այդ առարկաների միասնական քննություններին ներկայացվող պահանջներին համապատասխան:

Քննություններն անց են կացվելու **2017 թվականի սեպտեմբերի 30-ից մինչև հոկտեմբերի 16-ը:**

Հեռակա ուսուցման բակալավրիատում ուսման տևողությունը հինգ տարի է:

Լրացուցիչ տեղեկություններ կարելի է ստանալ ՀՊՏՀ ընդունող հանձնաժողովից, հասցե՝ ք. Երևան, Նալբանդյան 128, հեռ. (010) 59-34-73: